ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03 դեկտեմբերի 2024թ.

Ժամը 11:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Տիրան Խաչատրյան

Անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տաթևիկ Պալոյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետի և սկսելու մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 02.12.2024թ-ին ժամը 11:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 03.12.2024թ.-ին ժամը 11:00-ին:

2. Գնման հայտով սահմանված գնման առարկաների քանակը և գինը.

Չափաբաժնի հ/հ	Անվանումը	Հաստատված քանակը	Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսվող գին /ՀՀ դրամ/
1.	Հիգիենիկ պարագաների փաթեթ	151200 հատ	99792000

3. Էլեկտրոնային աճուրդի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին մասնակցել է թվով 2 մասնակից.

Հ/Հ	Մասնակցի անվանումը /անունը/	ՀՎՀՀ	Հասցե	Հեռախոսահամար
1.	«Տիգման Գրուպ» ՍՊԸ	00890518	Ք. Երևան, Մոլդովական 20, 2.40	091-91-99-01
2.	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	00103837	Ք. Երևան, Վ. Համբարձումյան 91	010-32-33-24

Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցների դիմում-հայտարարությունները և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

4.Տեղեկություններ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումները ներկայացված են ստորև.

ՀԱՐՑՈՒՄ 1 Հարգելի Պատվիրատու << 8.Զուգարանի թուղթ, 1հատ: Զուգարանի թուղթը երկշերտ, 100% ցելուլոզա, թղթի լայնությունը ոչ պակաս 9,8 սմ, թղթի ռուլոնի երկարությունը ոչ պակաս 22,5 մետր՝ բաղկացած է իրար միացված թերթիկներից, քաշը՝ ոչ պակաս 75 գր.>> նշված պարամետրերում թղթի լայնությունը ոչ պակաս 9,8 սմ-ի դեպքում ստանդարտներով լինում են T6 սիտեմի այսինքն յգտագործվում են դիսպենսերների համար ու մինիմալ երկարությունները սկսվում են 90 մետրից : Կենցաղային պայմաներում օգտագործման համար 9-ից մինչև 9,5 սմ լայնության թղթերն են : Արդյոք հնարավոր է վերանայել 9,5 սմ տարբերակը՞ դրա դիմաց ավելացնելով երկարությունը : Ամեն դեպքում 9,8 և ավել լայնության զուգարանի թղթերը T4 կենցաղային օգտագործման սիստեմայից փոխվում են T6 սիստեմա ինչն էլ առաջացնում է խնդիր տրված 22,5 մետրից ոչ պակաս երկարության կետում , քանի որ ինչպես նշել էի այդ լայնության ժամանակ երկարությունները սկսվում են 90 մետրից :

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 1 Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում եմ, որ զուգարանի թղթի մատակարարումը պետք է իրականացվի համաձայն մեր կողմից սահմանված տեխնիկական բնութագրի:

ՀԱՐՑՈՒՄ 2 Հարգելի գործընկերներ՝ Համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի՝ բոլոր հիգենիկ պարագաները պետք է տեղադրված լինեն մեկ փաթեթում՝ համապատասխան փականով: Զուգարանի թուղթ ապրանքատեսակը բավականին լայն է՝ մոտ 11 սմ:Մեկ փաթեթում բոլորը տեղավորելու համար անհրաժեշտ է նախատեսել լայն չափի փաթեթ, որի զգալի մասը կմնա դատարկ: Խնդրում եմ պարզաբանել՝ արդյոք ընդունելի է այն տարբերակը, երբ միայն զուգարանի թուղթը մեկական փաթեթավորված լինի պոլիէթիլենային փաթեթում և մատակարարվի պահանջվող մեկ ամբողջական փաթեթի փոխարե՝ երկու առանձին փաթեթներով. Շնորհակալություն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 2 Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում եմ, մեկ փաթեթում հնարավոր է այնպես տեղավորել պարագաները, որ համաչափ դասավորված լինեն, օրինակ՝ զուգարանի թուղթը դրված լինի փաթեթի մի կողմում, իսկ մնացած պարագաները մյուս կողմում: Հիգիենիկ փաթեթը պետք է մատակարարվի համաձայն տեխնիկական բնութագրի:

5. Մասնակցի գնային առաջարկը.

5.1. Մասնակիցների կողմից առաջարկված նախնական և վերջնական գնային առաջարկները, ներկայացված են ստորև.

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	«Տիգման Գրուպ» ՍՊԸ	99792000	83155000	20 %	99786000	64000000	20 %	76800000
1	2	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	99792000	83160000	20 %	99792000	66000000	20 %	79200000

6. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակցին որոշելու և հայտարարելու մասին.

6.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. **Պայմանագիր կնքելու որոշման մասին.**

Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, ըստ որի՝

7.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի 1 չափաբաժի մասով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

7.2. Ընտրված՝ հաղթող, մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ՝_____ **Տ. Խաչատրյան**

Քարտուղար՝_____ **Ն. Աբովյան**

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ **Հ. Հովհաննիսյան**

2. _____ **Տ. Պալոյան**